

իր խօսքը արդի սերունդին ուղղելով, իր
բերեւ իմաստուն պապիկ մը, կը գոչէ.

Այ մանկաիք, եկէք շուրջ Նահապետիս...

Մանկաիք, զիս Հայոց հողն ու ջուր սնուցել,
Ես այն հողն ու ջուր սրտով եմ սիրել,
Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անոյշ,
Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենեաց փուշ.

Ձեզ կ'ասեմ մանկունք, սիրունք, նազելիք,
Որոց է բնական Հայոց աշխարհիկ.
Մ'ուրանայք զերկիրդ ու զազգըդ սիրուն,
Ծառն՝ արմատով ծառ, տունն՝ հիմամբ է տուն:

Ալիշան անմահացուց մեր նախահայրե-
րու մտքի ու հանճարի անսահման չը-
նորհները, անոնց շինարար արդիւնքնե-
րը: «Հայ հանգար»-ի ոսկեղենիկ պատգա-
մով նա կնքեց անոնց յաջորդող սերունդ-
ներուն վրայ ունեցած իր անսահման հա-
ւատքն ու վստահութիւնը, որ եղաւ նախ-
երգանքը, ու մեր բնաշխարհի այսօրուան
իրականութեան մարգարէական տեսիլքը:

Ալիշան մեծ ըրաւ Հայաստանը:

Հայաստան մեծ ըրաւ Ալիշանը:

ՄԱՆՈՒԿ ԽԱՆՊԵՅԵԱՆ



Վիպական «Պատուոյ անդամակցութեան», Իտալիոյ Ասիական Ընկերութեան կողմէ տրուած
Հ. Ալիշանին, 1887 Յուլիս 1 քուակառով. (ԳԻԻԱՆ Ս. ՂԱԶԱՐՈՒ):

ՆԱՀԱՊԵՏԻՆ ՎԻՇՏԸ

ԱԼԻՇԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Անցեալի թանճր վարագոյրը կ'անօրա-
նայ, կը ցրուին մոռալ ամպերը եւ պայ-
ծառ հորիզոնին վրայ անգամ մըն ալ կը
Ժպտի՝ զերդ արշալոյս մը դեւթական՝
ամէնուս ծանօթ ու սիրելի դէմքը Հ. Ա-
լիշանի. ու մինչ ազդովին կ'ողջունենք
լիշանի. ու մինչ ազդովին կ'ողջունենք
այսօր այդ դէմքը լուսաշող, հաճելի է
ինձի նշմարել հոն, ստուերի մէջ, խոր-
հրդաւոր կէտ մը՝ ուր կարծես չեն թա-
փանցեր արեւի շողեր: Ալիշանի սիրտն է
ատիկա:

Կէս դարէ աւելի Հ. Ալիշան փայլած է
արուեստակի նման՝ հայ երկնակամարին
վրայ. բայց իր սիրտը շատերուն համար
մնացած է անծանօթ. անծանօթ՝ իր ա-
պրումներով եւ խոկումներով, խորհրդ-
աւոր ուկեան մը՝ իր կեանքի փոթոր-
կումներով: Ու բնական տենչ մը կը մղէ
մեզ անոր բանաստեղծական գրութիւննե-
րու համառօտ ուսումնասիրութեամբ՝
քիչ մը աւելի ծանօթանալ անոր հոգիին
ծալքերուն: Բայց միթէ բանաստեղծա-
կան գրութիւններէն կարելի՞ է ծանօթա-
նալ մարդու մը ներքին ապրումներուն,
բանաստեղծութիւնը կրնա՞յ մեզի հոգիի
մը պատմութիւնը ընծայել. այո՛, որով-
հետեւ բանաստեղծութիւնը վերացական
բառ մը չէ, եւ ոչ ալ գոյներու լոկ նկա-
րագրութիւն մը. ան կեանք է եւ ապրե-
լած իրականութիւն մը. հոգիէ մը բխած
բանաստեղծութիւնը այդ հոգիին ապրած
կեանքի արտայայտութիւնն է: Բանաս-
տեղծութիւնը իր այս իսկական իմաստով
կ'իրականանայ Նահապետին գործերուն
մէջ, որոնք գրեթէ ամբողջապէս Նուագ-
ներուն մէջ կ'ամփոփուին: Էջեր՝ ուր տա-
կաւին ջերմ արցունքներ կը շողան, դեռ
կարօտի երգեր կը հնչեն եւ ազօթքի
մըմունջներ: Նուագները Նահապետին ա-
պրումներն են, հոգեվիճակները, յոյսե-

րուն երգը, նուազկոտ Ժպիտը, ցաւին ու
վշտին ճիւղ. հոն կը կուտակուին ալիք-
ներ, կը լեռնանան, կը դուռնան, կը մոռնան
ու կը փչրուին յանկարծ ծովափին մօտ,
այնպիսի յուզիչ երգով ու ողբով՝ որ
սրտերը կը լացնեն: Աւելորդ է փնտռել
Նուագներուն մէջ Ժպիտներու տեւական
ճառագայթներ եւ հրճուանքի շողեր. Ա-
լիշանի սիրտը պանդուխտի սիրտ է. ցա-
ւով, տառապանքով, կարօտով, լուռ
վիշտերով առկուռ: Յաւը Ալիշանի մէջ
անցողակի պահ մը չէ, այլ զդացուած,
երկայն Ժամանակ պահուած, ապրուած
ցաւ մըն է, եւ դուցէ այս ցաւն է որ ա-
ռաջնորդած է զինքը փառքի կատարնե-
րուն. որովհետեւ եթէ ուրախութեան ու
հրճուանքի պահերը կը բարձրացնեն
մարդու սիրտը, ցաւն է որ կը թափան-
ցէ մեր էութեան խորը, կը ճանչցնէ
կեանքի իրականութիւնը՝ իր զանազան
ծալքերուն մէջ:

Ալիշան իր քերթումներուն մէջ կը
յայտնաբերէ բնութեան երանգներն ու
ձայները սիրող հոգի մը, ծովուն կոհակ-
ներու արձագանգէն յուզուող սիրտ մը:
Իր առաջին գրութիւններն արդէն ուրիշ
բան չեն՝ եթէ ոչ բնութեան պատկերներ,
ուր աւելի նկարագրութիւն կայ՝ քան ապ-
րում. իրապէս «Բնունի»-ի առաջին ոտա-
ւորներուն մէջ կը պակսի խորութիւ-
նը, կը պակսի այն հոգին, այն շունչը, որ
պիտի յայտնուի ապագայ քերթումնե-
րուն մէջ: Վերջալոյսի շողեր իրեն կը յի-
շեցնեն կեանքին ալ յետին վայրկեանը,
արուեստակը առիթը կ'ընծայէ խոկալու իր
անձին մասին. բայց առիկա պահ մըն է
միայն, փոքրիկ կայծ մը՝ որ կը մարի
առանց հրդեհելու հեղինակին հոգին:
Կեանքի ծալքերուն եւ դաւադրանքներուն
անծանօթ սիրտ մըն է, որ կը նայի շուր-

Ջի առարկաներուն՝ առանց թափանցելու անոնց մէջ, աւելի դոյներով կը զբաղի՝ քան խորհրդածութիւններով:

«Բնունի»ին մէջ երկտասարդ բանաստեղծը՝ կարծէք՝ դոյներու աշխարհը գերազանցելու կարողութիւն չունի, սահմանափակուելով լոկ արտաքին իրերու նկարագրութիւններու մէջ. բնութիւնը, որուն կը զիմէ, կ'արդիւնէ թուիչքը եւ սրլացքը դէպի հոգեկան աշխարհներ. բայց այս սկզբնական շրջանը երկայն պիտի չտեսէ. Ալիշան պիտի գտնէ ուրիշ բնութիւն մը, ուրիշ աշխարհ մը, ուրիշ տիեզերք մը. իր սիրտը... Պիտի սիրէ խորանալ ինքնիր մէջ, պիտի թափանցէ իր զգացումներուն եւ ապրումներուն անդունդին մէջ, եւ սրտի լուծեան մէջ պիտի գտնէ նոր հորիզոններ, պիտի լսէ քաղցր եւ խորհրդաւոր ձայներ. ձայներ՝ որ չեն նմանիր առուակներու կարկաչին կամ զեփիւռի շշուշին. ձայներ՝ որոնց ներգաշնակութիւնը կը հմայեն ու կը զիւթեն բանաստեղծի հոգին: Այս շրջանին է որ Ալիշան կը թափանցէ իր ներաշխարհը. հոն կը գտնէ աշխարհ տերեւներ, թառամած վարդեր, լուռ վիշտեր. կը ճանչնայ թէ մարդու սիրտը անյատակ ուկեան մ'է, ուր դժուար կը թափանցեն հրճուանքի շողեր: Ալիշանի հոգին այլեւս ստեղծագործողի թեւեր կ'առնէ. չ'ուզեր սահմանափակուիլ բոստանական զգացումներու ազդեցութեան ներքեւ, կը սլանայ վեր ու թեւերը բացած՝ կ'ուզէ գրկել համայն մարդկութիւնը. տեղեակ ու ծանօթ է հիմա մարդկային թշուառութեան. կ'ուզէ հասնիլ ամէնուն, մահկանացուներուն կեանք բաշխել, սրտերուն լոյս փռել, կարեկից ըլլալ ցաւին: Բայց աւա՛ղ, Ալիշան կը զգայ իր անբաւարարութիւնը. ի՞նչպէս բուժել վիրաւոր սրտեր, երբ իր հոգիին խորը սուր վէրք մը կ'այրի. ի՞նչպէս փռչեցնեն տեղ վարդեր ցանել հոգիներու պարտէզին մէջ, երբ ցաւը կը տանջէ եւ կը խռովէ իր էութիւնը: Ալիշան երկտասարդ է՝ տարիքով. բայց արդէն հո-

րիզոնին վրայ սեւ ամպեր կը կուտակուին. բանաստեղծին սիրտը համակուած է արդէն թախիծով. իր քնարէն չեն թրթուար այլեւս զուարթ երգեր. կեանքի դառնութիւնը ճաշակած հոգի մըն է ու զգուած աշխարհէ. կը բաւէ յիշել Ընկուզենիի հովանիին տակ զրուած քերթուածը.

Քաղցր ինձ եւ այսօր զովիկ
չըշխնդ օգաղաշնակ...

Այլ մաղձամըղձիկ ըզմէ՞

ճմլի սիրտ սեւորակ.

Ոչ եւս ինքնաշարժ վագեն
ի քնար մնտուռը հրապար,
Բայց թ'առ յուշ նախնի՝ դորովեալ
դամ մի սիրաբար:

Ամօք թէպէտ ոչ յոյժ երկարովք
կըռեալ հասակ

Սակայն ծանրասիրտ կըքի
յերկիր լըրջագիծակ.

Աւիւն աշարոյժ ծորեալ
նըւաղ ակնարկեն բերք,

Եւ ըզլերնածայր դիմացս
ունի սպիտակ փընջիկ:

Ոչ եւս ծաղկածեմ կայտոյ
ի դնալըն դարչապար.

Այլ եւ ընդ ծաղկամբք խիթայ
զմըթինըն ճանապարհ:...

Ոչ եւս քաղցրանայ ինձ
ոլիւմբեանն այն օշարակ,

Կըրթելոյս ի դառն յանսեթեւեթ
յամբ ի ճաշակ:

(Նուագ, Բ, 1885, էջ 231-32)

Ալիշան երեսունեւմէկ տարեկան էր՝ երբ կը գրէր այս տողերը:

Ամէն քերթուածի մէջ պիտի գտնենք արցունք, արցունք մը շատ յուզիչ, միաժամանակ շատ խորհրդաւոր. ո՞վ չէ տեսած երկտասարդ աչքերու մէջ արցունքներ եւ չէ լացած անոր հետ. ո՞վ չէ տեսած տրտում բերք՝ դեռ խանդավառ սրտերու մէջ եւ չէ տրտած անոնց հետ:

Մենաւոր է բանաստեղծը, կարեկից մը չունի, ցաւը կը ծանրանայ, կը ճնշէ սրտին վրայ. Ալիշան կը փնտռէ մտերիմ մը, բայց ի զո՛ւր. նոյնիսկ բնութիւնը՝

զոր այնքան կը սիրէր եւ որուն այնքան ստէպ կը զիմէր՝ չի տար դոհացում իր սրտին. Տէրունիի եւ Խոհունիի մէջ կը նշմարեն խօսքեր, բացատրութիւններ, ակնարկներ եւ նոյն իսկ քերթուածներ, որ կը մատնանչեն այս հոգեվիճակը. բայց աւելի կը շեշտուին Տէրունիին մէջ, մանաւանդ «Ընդ երկարել պանդխտութեան» եւ «Հուսկ Բան առ Ոգին նուագահան» վերջին երկու քերթուածներուն մէջ: Հոս ցաւը կը յայտնուի իր բոլոր ուժգնութեամբ, խորութեամբ որ կ'ալեկոծի, կը փոթորկի, իր սրտին ափերուն կը դարնէ, փշրելու համար զայն:

Յաւքըս զըժոխք ձեւանան,
եւ ժամանակն յաւիտեանք.

Սիրտըս ջեռեալ եւ պայթէ,
հուր եռացեալ սրբիոյ՝ դուրս.

Բոցակիզէ զհասարակ
ու ոչ դտանէ ելի դուրս.

Յանձն իւր դարձեալ ճարակի,
զինքըն խամբէ եւ խարէ,

Իրբեւ հրաճայթ լեռնորկոր
դամ մի լոյս, միշտ խաւար է:
(Նուագ, Բ, 1886, էջ 204)

Եթէ ցաւը պիտի չմեղմանայ, մանաւանդ թէ տառապանք, տանջանք եւ տըւայտանք պիտի դառնայ, եթէ ոչ ոք պիտի կարեկցի իրեն, աւելի լաւ չէ՞ չերգել եւ պարապ տեղ սիրտ չմաշել.

Ահ, առիմէ՞ գրիչ մաշեմ
եւ սիրտ հաշեմ ի բողոք,

Թէ յետ այսքան աղիտիս
չըմատուցաւ ունկն ողոր.

Ո՞չ լաւ իցէ կալ լըռել
մընչել անձայնըս յողորջ,

Ամփոփել յիս ինքն ըզհուր
եւ ըզճաճանչքըս դողդոջ,

Լինել աղբեր մի փակեալ
որ յար յինքեան զըրբէ

ի ծորելոցն արտասուաց
ոյց մուտ եւ ել յայտ ոչ է...
(Նուագ, Բ, 1886, էջ 206)

Բայց ո՛չ. քնարէն հրաժարելէ առաջ, անդամ մըն ալ կը զիմէ բնութեան, դու-

ցէ հովը կարենայ զովացնել իր սիրտը կամ մարել ցաւի բոցերը.

Ասա նոցա՝ եթէ բաւես՝
հուրք են ի սրտիս.

Այլեթէ ոչ՝ անկիւր ի ներքս
եւ զովացո՛վ զիս:

(Նուագ, Բ, 1886, էջ 212)

Աւա՛ղ, հովն ալ չէր կրնար մարել այդ անհուն կրակը, այդ մեծղի հրդեհը: Այս անգամ Ալիշան դեռի եղբրքին, աչքերը կ'ուզէ դէպի վեր, դէպի երկինք, եւ բողոք մը չէ որ կը բարձրացնէ, այլ կարծէք Աստուծոյ գթութիւնը կ'ուզէ շարժել.

Տէ՛ր, որ չափով եղեր ծովու խիճ եւ չիթ
Ձիցէ՞ համար սրտիս կըրկց դառնախիթ:
(Նուագ, Բ, 1858, էջ 203)

Այս յետին ճիզն վերջ՝ Ալիշան հրաժեշտ կու տայ բանաստեղծութեան եւ լուծեան կը փարի.

Եւ դու լըռեա՛լ՝ յառհետեւ
սիրտ իմ պանդուխտ վշտահար.
Թէ լալ կամիս՝ լա՛ց լըռիկ
եւ բարձրագոյժ մի՛ ողբար.
(Նուագ, Բ, 1886, 207)

Այս տողերը կը պատրաստեն Ալիշանի Հուսկ բանը:

Ի՞նչ է Հուսկ Բան առ Ոգին նուագահան քերթուածը. հոգիի մը պատմութիւնն է, երկտասարդի մը ողբերգութիւնը. այդ ողբերգութեան հեղինակը Ալիշան ինքն է, որ կը նկարագրէ մահ մը, հոգեկան տառապալին վիճակ մը, հոգիի մը ողջ ողջ մեռնիլը: Ո՞վ է մեռնողը. երեսունեւերկու տարեկան Ալիշանն է...: Եւ այս քերթուածը Ալիշանի արցունքներուն սափորն է, հոգիին հրդեհը, սրտի աղաղակը, մեռնող կարապի վերջին երգը, վիրաւոր առիւծի մոնչիւնը, հրաժեշտի ողջոյնը՝ որով կը թողու բանաստեղծութիւնը:

Առաջին ակնարկով այս հրաժեշտը Ալիշանի կամքէն անկախ կը թուի, եւ հետեւանք՝ բանաստեղծական շունչին կամ աւիւնի սառելուն. այն Ոգին՝ որ իրեն

տածենք՝ թէ իրական բանաստեղծը չի կրնար չգրել, նոյն իսկ հակառակ իր կամքին. ներքին խորհրդաւոր մղում մը կը ստիպէ զինքը. Հ. Ալիշանի բնութիւնն ալ դանդաղօրէն կը համակերպի այս բաժանումին, տարիէ տարի նուազելով:

Ալիշան հրաժեշտ տալով բանաստեղծութեան՝ կը տառապի վիշտերու մէջ, և իր այս տանջանքը արտայայտելու համար՝ կը դիմէ պատկերներու եւ կրկնութիւններու. ու գրելը թաթխած արիւնոտ սրտին՝ կը դրէ ոչ թէ քերթուած մը, այլ ցաւի ողբերգութիւն մը, յուզիչ եւ ազդու:

Արդ սիրտ խեղկեալ իբրու
զեռ յանարդիլ կոյտ սառնասոյզ
Դանդաղելով յատիճանս
Քառավազից փրփրայոյզ,
Բիւրդաքատակ բլաղեալ
պակնու պաղի վիմատառ,
Ոչ եւս վարդի վազէ յիւրըն
յարահետ քաջափառ.
Կամ իբր առիւծ վիրաւոր
ի մոռնչն յետին ապաստան
Մարնչել ճղգնի հզօրագոյնս
ու ապա լռել յաւիտեան
...
Որ կենդանեաւ մեռանի՝
հիմ չողբայ զմահ իւր հեղիկ:
Ո՛հ, զի՛ չքնաղ ինձ լալիք
որ զապաղայն իւր ելաց.
Զի՛ սքանչելի այն յուզարկ՝
որ զիւր դազաղն ինքն երարձ.
Նուագ, Ե, 1886, էջ 227-8)

Բաժանումի պահուն կը ծագին զանազան դժուարութիւններ. մարդկային բընական զգացումին եւ գերբնական տեսութեան պայքարը կը սկսի. անկարելի կը թուի հրաժարիլ այդ կեանքէն: Ինչո՞ւ խլիլ դափնեպսակը բանաստեղծի ճակատէն, ինչո՞ւ երկար տարիներու աշխատանքը վայրկեանի մէջ քանդել...: Ալիշան աչքերը կ'ուզէր դէպի երկինք եւ այդ բարձունքէն կը չափէ այս աշխարհի ժամանակաւոր եւ վաղանցուկ խոստումները ու կը խորհրդածէ ինքնիրեն:

Եւ նրկատել զգեղածինս
զարնան՝ թափեալս զարնանի
Զոլորտացեալն թռչուն
հարեալ ի կէս թռչանի
...
Հայել ընդ համր ընդ Հոմեր,
ընդ նիրհեցեալն Նարեկ
...
Զի՛ հեշտ յայնժամ ամփոփել
ըզուրթն եւ մատն ի լարէ,
Եւ ասել, Սիրտ, չառ է մեղ,
հրաժարեսցուք ի քնարէ:
(Անդ, էջ 228-9)

Հրաժեշտի վերջին պահն է. Ալիշան կը նախատեսէ ապագան, վերջալոյսը իր կեանքին, երբ ինքը, յողնած ծերունի, մահուան անկողնին մէջ պիտի աւանդէ հոգին. երջանիկ պահ, բայց ժամ փորձութեան. Նահապետը կը խնդրէ Ոգիէն որ այդ ժամուն իրեն այցելէ եւ զօրացնէ իր հոգին.
Ասա, «Սիրտ, մի՛ զարհուրել.
որ զքեւ թուրի շուրջ դալի
Միայն ցընորք եւ երազք,
ունայնութիւն աշխարհի.
Այլ քո հաւատք քո յոյս քո սէր
կան մնան հաստատուն
...
Մատո զճակատ հոգատանջ
ի բարձ խաչին փրկչակիր
...
Յուշ քեզ Յիսուս, քո Աստուած.
եւ նա կըրեաց անձանձիր.
Եւ նորա սիրտ ձրձեցաւ.
նմա նմանեաց, ա՛նց մեռի՛ր»...
(Անդ, էջ 237-8)

Այսպէս Հուսի բաց առ Ոգին նուագահանը, ցաւի այս մեծ երգը կը նուազի քրիստոնէական խոկումներով: Յաւն ու տանջող խռովքը չեն առաջնորդեր քերթողը յուսահատութեան կամ յուռեանութեան. ամէնէն աւելի վշտալի պահերուն, երբ Ալիշան կը զգայ թէ սիրտը այլ եւս դիմանալու ոյժ չունի, կը փարի կրօնքին, այն է իր յոյսը: Եւ այդ յոյսը երբեք չէ նուազած անոր սրտին մէջ. որ-

քան կը տեսնէ այս աշխարհի ունայնութիւնը՝ այնքան սիրտը կը բարձրանայ վեր, եւ իր վէրքին սիրտինքը երկնքի մէջ կը փնտռէ. Տէրունին վիրաւոր սըրտի ազադակն է, բայց միաժամանակ Աստուծոյ հանդէպ յոյսի եւ վստահութեան մեղեդի մը:

Հոգի, ընդէ՞ր տրտում ես,
Անձն իմ, ըզմէ՞ սրգատես.
Արի յուսով եւ խօսեաց
Ահա փրկիչ քո հայեաց,
(Նուագ, Դ, 1888, էջ 26)

Ալիշան շատ անգամ դիմած է բնութեան, ձեռքը կարկառած օտարին, որ պէտքի դիման իր վրայ, չող մը դռնէ ծագեն իր սրտի մթաղանած հորիզոնին. բայց բնութիւնը չէ սիրտի անոր ցաւը: Ալիշան աչքերը կ'ուզէր երկնային փարոսին, այդ անմար փարոսը յոյսն է:

Յո՛յս իմ ի տիոցըս մանկութեան,
Առ քեզ կարդամ ցայդ եւ ցերեկ.
Ո՛վ այցելու հանուրց մարդկան
Որ զանց զնօքօք չառնես երբեք.
Յոյս իմ յաւուրըս ծերութեան
Տէր, մի՛ թողուր զիս յաւիտեան:
...
Յոյս իմ, յաճախ յուսախնդիր
Կարկառեցի ձեռն առ օտար,
Եւ դարձուցի զուր եւ նանիր,
Զի բաց ի քէն չիք բարերար:
(Նուագ, Դ, 1888, էջ 67-68)

Ալիշանի կրօնական խոկումներուն կը ծանօթանանք մասնաւորապէս մահուան վրայ դրած քերթումներով: Տէրունիի մէջ կան արդէն այս մասին բաւական ակնարկներ, բայց զխաւորապէս Տէրունիի մէջ: Ալիշան մահուան դադափարը միշտ աչքին առջեւ ունեցած է, մտածած անոր վրայ, ու սարսափած անկէ. բայց հեռուէն աչք զադափարը կորսնցնելով իր ահարկութիւնը՝ ուրախութեան եւ հրճուանքի աղբիւր դարձած է, թէ եւ միշտ մնացած է Ալիշանի մէջ թեթեւ երկիւղ մը, եւ մահը կոչած՝ կամուրջ երկիւղալի. այս պատճառով ստէպ դիմած է Աստուծոյ, որ զօրացնէ իր հոգին:

Որչափ սահի նդ ոտիւքս երկիր
Եւ կենցաղոյս յոյսք հեռանան,
Որչափ մահուն մերձի թմբիր
Զօրացո՞ դու զսիրտ իմ այնքան:
(Անդ, էջ 68)

Տէրունիի քերթումներուն մէջ Ալիշան կը յայտնուի մեղի անձ մը որ իր երջանկութեան արեւը երկնքի մէջ կ'որոնէ. այս աշխարհի մէջ ամէն բան ունայն է, ամէն բան վաղանցուկ, միայն Աստուծոյ հանդէպ սէրն է յաւիտեանական, միայն յոյսն է՝ որ չի թառամիր մարդուս սրտին մէջ:

Անցեալ եկի նդ բազում փորձանս
Տեսի զբարի եւ չար երկրիս.
Ահա նդունայն էր ամենայնս
Կորեաւ համայն, յոյս քո կայ յիս:
(Անդ, էջ 68)

Մի՛, զառածիս յանդուլ ցաւս,
Բաժին սրտի՛ բարձունս է.
Արհամարհեա զառերկրաւս
Եւ տրտմութիւնդ ոչ եւս է:
(Նուագ, Ե, 1886, էջ 15)

Սիրելի է դիտել Հ. Ալիշանը, այդ մեծ բանաստեղծը, իր հոգեւոր խոկումներուն եւ մտածումներուն մէջ, մինչ կը ճեմէ Ս. Ղազարի մենաստանի նոճիներու ուղիէն, իր զոգզոջուն բիրերով մարող արեւի շողերը դիտելով...: Մինչ Ալիշան կը խօսէ իր կեանքի վերջալոյսին՝ ոսկեղէն ստուեր մը կ'ըլլայ մեր աչքերուն, հեռաւոր հորիզոնին վրայ. ո՛հ, որքան դժուար է բաժնուիլ այդ հոգիէն, երբ անոր սրտի անյատակ անդունդին մէջ թափանցած է մեր ալ հոգին: Ալիշանի հոգիէն բաժնուելէն առաջ՝ վերջին անգամ մ'ալ դիտելով անոր լուսաւոր դէմքը, կը խորհրդածեմ թէ ի՞նչ կրցայ ըսել անոր մասին. կրցա՞յ դռնէ ամփոփել քանի մը կայծեր անոր բռնկած հոգիէն այս ցիրուցան էջերուն մէջ. կրցա՞յ հաւաքել քանի մը արցունք անոր պանդուխտ աչքերէն. դուցէ միայն կրցայ ըսել թէ «Եկեաց, ելաց եւ երգեաց»:

Բայց այսքանը բաւարար է Ալիշանի պէս անմահ անունին:

Գ. Ս.